



Վերանայված է 2021 թվականի նոյեմբերին

Medicare-ը փոխհաստուցում է Քովիդ-19 պատվաստումը

Ծանր խրոնիկական հիվանդություն ունեցող 65 և ավելի բարձր տարիքի անձինք 2019 կորոնավիրուսային հիվանդության (Քովիդ 19) հետևանքով ավելի լուրջ հիվանդություններ ունենալու ավելի բարձր ռիսկի տակ են: Կարևոր է խոսել Ձեր բժշկի կամ տեղական առողջապահական բաժնի հետ՝ Ձեզ և Ձեր սիրելիներին Քովիդ-19-ից պաշտպանելու համար պատվաստանյութ ստանալու վերաբերյալ:

Դուք ոչինչ չեք վճարում Քովիդ-19 դեմ պատվաստանյութի և պատվաստումը ստանալու համար: Եթե դուք 65 տարեկան և բարձր եք կամ գտնվում եք բարձր ռիսկի տակ, Medicare-ը ծածկում է Pfizer կամ Moderna COVID-19-ի դեմ խթանիչ դեղաչափով պատվաստումը պատվաստանյութի սերիայի երկրորդ դեղաչափն ավարտելուց առնվազն 6 ամիս հետո կամ Johnson & Johnson COVID-19-ի դեմ խթանիչ դեղաչափով պատվաստումը՝ 2 կամ ավելի ամիս հետո: Դուք կարող եք ընտրել միայն այն պատվաստանյութը, որը դուք կստանաք ձեր **խթանիչ** դեղաչափով պատվաստման համար. ստացեք խթանիչ պատվաստում նույն COVID-19-ի դեմ պատվաստանյութից, որն ի սկզբանե ստացել եք, կամ ընտրեք այլ պատվաստանյութ:

Եթե իմունային անբավարարվածություն ունեք (օրինակ՝ դուք օրգանի փոխպատվաստում եք կատարել և ունեք վարակների և այլ հիվանդությունների ավելի բարձր ռիսկ), Medicare-ը կփոխհաստուցի COVID-19 պատվաստանյութի լրացուցիչ չափաբաժինը ձեր երկրորդ դեղաչափից առնվազն 28 օր հետո:

Նշում՝ Մի համատեղեք պատվաստանյութերը ձեր երրորդ դեղաչափի համար: Եթե ձեր առաջին 2 դեղաչափը Pfizer էր, ձեր երրորդ դեղաչափը նույնպես պետք է լինի Pfizer: Եթե ձեր առաջին 2 դեղաչափը Moderna էր, ձեր երրորդ դեղաչափը նույնպես պետք է լինի Moderna:

Երբ գնում եք ձեր խթանիչ պատվաստանյութը ստանալու, չմոռանաք Ձեզ հետ վերցնել Ձեր **կարմիր, սպիտակ, և կապույտ** Medicare քարտերը, որպեսզի Ձեր առողջապահական ծառայություն մատուցողը կարողանա հաշիվ ներկայացնել Medicare-ին: Ձեզ պետք կգա Ձեր Medicare քարտը, նույնիսկ եթե Դուք գրանցված եք Medicare Advantage պլանում: Մուտք գործե՛ք (կամ ստեղծե՛ք) Ձեր ապահով հաշիվը Medicare.gov կայքում՝ Ձեր քարտի պաշտոնական պատճեն տպելու համար:

Եթե ունեք Medicare և դժվարանում եք պատվաստանյութ ստանալ տնից հեռու (օրինակ՝ հաշմանդամության պատճառով), Medicare-ը կվճարի բժշկի կամ այլ մատակարարի ծախսերը՝ Ձեր տանը COVID-19-ի դեմ պատվաստումն անելու համար:

Եթե վճարել եք կամ հաշիվ եք ստացել COVID-19-ի դեմ պատվաստանյութի համար

- Ստուգեք Ձեզ ծառայություն մատուցողի կողմից տրված ստացականներն ու հայտարարագրերը՝ սխալները պարզելու համար:
- Չանգահարեք Ձեզ ծառայություն մատուցողի գրասենյակ՝ ցանկացած վճարի մասին հարցնելու համար, եթե կարծում եք, որ դրանք սխալ են: Այն անձը, որի հետ Դուք կխոսեք, կարող է օգնել Ձեզ ավելի լավ հասկանալ Ձեր ստացած ծառայությունները կամ էլ կհասկանա, որ վճարման պահանջագրի սխալ է տեղի ունեցել:
- Վերանայեք ձեր «Medicare ամփոփ ծանուցումը» սխալների համար, եթե ունեք Original Medicare: Ցանկացած կասկածելի բան զեկուցեք Medicare-ին՝ զանգահարելով 1-800-MEDICARE (1-800-633-4227): TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարով:

Եթե վճարել եք կամ հաշիվ եք ստացել COVID-19-ի դեմ պատվաստանյութի համար (շարունակություն)

- Վերանայեք ձեր «Նպաստների բացատրությունը», եթե ունեք այլ ապահովագրություն, օրինակ՝ Medicare Advantage Plan-ը: Ցանկացած կասկածելի բան հայտնեք Ձեր ապահովագրողին:

Եթե կարծում եք, որ Ձեր ծառայություն մատուցողը սխալմամբ Ձեզնից Քովիդ-19-ի դեմ պատվաստման համար գումար է գանձել, խնդրեք նրանց ետ վերադարձնել գումարը: Եթե կարծում եք, որ Ձեր ծառայություն մատուցողը Ձեզնից գումար է գանձել այցի կամ այլ բանի համար, բայց Ձեր միակ ստացած ծառայությունը Քովիդ-19-ի դեմ պատվաստումն է, զեկուցեք դրա մասին ԱՄՆ Առողջապահության և Սոցիալական հարցերի նախարարության Գլխավոր քննչական վարչություն՝ զանգահարելով 1-800-HHS-TIPS կամ այցելելով tips.hhs.gov:

Պաշտպանեք Ձեզ խարդախությունից

- Պահեք Ձեր անձնական և ֆինանսական տեղեկություններն ապահով: Մի կիսեք Ձեր տվյալները, եթե ինչ-որ մեկը զանգահարում, հաղորդագրություն կամ էլեկտրոնային նամակ է ուղարկում Ձեզ՝ վճարի դիմաց Ձեզ համար պատվաստանյութը հասանելի դարձնելու խոստմամբ:
- Զգուշացեք դրամաշորթներից, որոնք գումար կամ Ձեր Medicare-ի համարն են ուզում՝ Քովիդ-19 պատվաստման կամ պատվաստման սպասողների ցուցակում Ձեզ ընդգրկելու համար:
- Դուք չպետք է վճարեք՝ Ձեր անունը պատվաստում ստանալու ցուցակում ընդգրկելու համար:
- Դուք չպետք է վճապատվաստանյութը Ձեզ հասանելի լինելու համար:

Իմացեք ավելին Քովիդ-19 պատվաստանյութի մասին

- Այցելեք [Medicare.gov/medicare-coronavirus](https://www.medicare.gov/medicare-coronavirus) կայքը՝ COVID-19 պատվաստանյութի՝ Medicare ծածկույթի և այլ հարակից ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար: Կամ զանգահարեք 1-800-MEDICARE (1-800-633-4227): TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարով:
- Այցելեք [CDC.gov/coronavirus](https://www.cdc.gov/coronavirus/):
- Կապվեք Ձեր տեղային առողջապահական վարչության հետ՝ [CDC.gov/publichealthgateway/healthdirectories/index.html](https://www.cdc.gov/publichealthgateway/healthdirectories/index.html):
- Այցելեք [Medicare.gov/coverage/coronavirus-disease-2019-covid-19-vaccine](https://www.medicare.gov/coverage/coronavirus-disease-2019-covid-19-vaccine):

Դուք իրավունք ունեք ստանալ Medicare-ի մասին տեղեկատվությունը հասանելի ձևաչափով, ինչպես օրինակ՝ մեծ տպագրությամբ, Բրայլի կամ ձայնագրության տեսքով: Դուք նաև իրավունք ունեք բողոք ներկայացնելու, եթե կարծում եք, որ ձեր նկատմամբ խտրականություն է կիրառվել: Այցելեք [p Medicare.gov/about-us/accessibility-nondiscrimination-notice](https://www.medicare.gov/about-us/accessibility-nondiscrimination-notice) կայքը կամ զանգահարեք 1-800-MEDICARE (1-800-633-4227)՝ լրացուցիչ տեղեկությունների համար: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարով:

Այս ապրանքն արտադրված է ԱՄՆ հարկ վճարողի հաշվին:

